



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 5-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԴՐԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 24-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին ներկայացվող ամսական հաշվետվությունների ձևերը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քաղաքացիական, քրեական, վարչական և սնանկության գործերի ընթացքի վերաբերյալ, վարչական և քաղաքացիական գործերով վճարման կարգադրություններ արձակելու վարույթների ընթացքի վերաբերյալ և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, դատական ակտերի և դատական հանձնարարությունների կատարման հետ կապված միջնորդությունների ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 1,2,3,4,5,6,7 հավելվածների.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի քաղաքացիական, քրեական և վարչական գործերով վերաքննիչ բողոքների քննության վերաբերյալ՝ համաձայն թիվ 8,9,10 հավելվածների.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի քրեական, քաղաքացիական և վարչական գործերով վճռաբեկ բողոքների քննության վերաբերյալ՝ համաձայն թիվ 11,12 հավելվածների:

2. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին ամսական հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի համար՝ մինչև հաջորդ ամսվա 7-ը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ և Գերագույն դատարանների համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 1-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2013թ. դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը հաստատելու, հաշվետվությունների ներկայացման ժամկետները սահմանելու մասին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. փետրվարի 02-ի թիվ 03-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 24-Լ որոշումը:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

21 մարտի 2016թ.

ք. Ստեփանակերտ